Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 թվականի մարտի 5-ի նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- 2018-2019 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսման վարձի չափը սահմանելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**:

Զեկուցողը նշեց. հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջին 1 (մեկ) ուսանողի համար տրամադրվող 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը, առաջարկվում է 2018-2019 ուսումնական տարվանից ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսման վարձի չափը սահմանել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ներկայիս 170.000 (հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի փոխարեն (քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Ա.Խառատյանի զեկուցագիրը կցվում է): Կից ներկայացված է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի փետրվարի 13-ի N-01/08.1/1215-18 գրությունը այն մասին, որ 2018-2019 ուսումնական տարում նվազելու է անվճար ուսուցմամբ ընդունելության տեղերի թիվը տնտեսագիտական ոլորտների մասնագիտությունների գծով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Կ.Աթոյանը, Մ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2018-2019 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսման վարձի չափը սահմանել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. մարտի 5
Երևան